




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3198

Հրահարակուրյուն Հ. Լ. Կ. ՅԵ. Ս. Կենսկոմբն Կից
Պիոներների Կենսունական Բյուրոյի.

Փոխարինողներին փոխարինողներ են գալիս.

ԼԵՆԻՆԻ ՀԵՏ

Կազմեց

Ս Ե Ր Ի Կ

087.1

Դ-23

ՅԵՐԵՎԱՆ—1926

16/25

087.1

23 JUN 2009

П-23

ԼԵՆԻՆԻ ՈՒՂԻՈՎ

1924 թվի Հունվարի 21-ին մեռավ Լենինը։ Այսօր լրանում է յերկու տարին, վոր բանվոր դասակարգը կորցրել է իր սիրելի ղեկավար՝ Իլյիչին։

Այդ մեծ կորուստը լրացնելու համար Կոմունիստական Կուսակցությունը իր շարքերն ընդունեց հազարավոր բանվորներ ու լարեց իր ամբողջ ուժը կոլեկտիվ մտքով տանելու բանվոր դասակարգին դեպի հաղթանակ։

Կոմյերիտմիությունն էլ ավելի խոացրեց իր շարքերը, խորացրեց աշխատանքները, վորպեսզի արժանի փոխարինողներ պատրաստի պայքարում հոգնածներին։

Պատանի պիոներներն էլ կապելով իրենց կազմակերպությունը Լենինի անվան հետ խոստացան իրենց շարքերում դաստյարակել իսկական Լենինյան սերունդ։

Ի՞նչու՞մն է կայանում Լենինյան դաստյարակությունը։

Գրառեպլար № 319բ.

Տիրաժ 3000.

Պետհրատի 2-րդ տպարան, Յերևան — № 413

1087
30449

3198

«Յերիտասարդ աճող սերունդը կոմունիզմի կարող է սովորել իր ուսման, դաստյարակման և կրթության ամեն մի քայլը կապելով պրոլետարյատի և աշխատավորների անընդհատ պայքարին ուղղված հին, շահագործողների հասարակարգի դեմ:»

Ահա այսպես է բնորոշել ինքը Լենինը յերիտասարդության կոմունիստական դաստյարակությունը:

Ահա Լենինի գծած այդ ուղիով է տարվել կոմյերիտմիության և նրան փոխարինող պիոներների դաստյարակությունը:

Այսօր, Իլյիչի մահվան յերկրորդ տարեդարձին Լենինյան յերեք սերունդն էլ հաշվի են առնում առանց Լենինի կատարած յերկու տարվա աշխատանքը ու ել ավելի խորացնում այն:

Մենք գնում ենք առանց Լենինի, բայց Լենինի ուղով:

Պիոներ! աշխատում ես դու իրկանացնել Լենինի պատգամները:

Լենինի սկսած գործը վերջացնելու համար անհրաժեշտ է կռվել տգիտության դեմ:

Յերբ դու հսկում ես քո և շրջապատիդ մաքրությանը, յերբ բարձրացնում ես բո կրթությունը ու դրդում միուս յերեխաներին նույն անել, յերբ համախմբում ես անապաստան յե-

ռեխաներին կողեկտիվիդ շուրջն ու ոգնում նրանց,—դու շարունակում ես Լենինի գործը:

Այսօր մտածիր, պիոներ:

Ինչպես պետք է կազմակերպես աշխատանքներդ, վորպեսզի ամեն մի քայլդ նպաստի բանվոր դասակարգի պայքարին. վորպեսզի դու ել քո փոքրիկ քարը դնես նոր կյանքի հիմքում:

Միայն մենք չենք, վոր սովորում ենք ու կատարում Լենինի պատգամները:

Բազմաթիվ պիոներներ յերկրի բոլոր մասերում այսօր հիշում են Լենինին:

Ու ամեն մեկը տարբեր լեզուներով այսօր մի կոչ ունեն:

„Պիոներներ ամբողջ աշխարհի, Լենինի պատգամները կատարելու համար՝ յեղեք պատրաստ“:

Ու ամեն մեկը յերկրի տարբեր մասերից պատասխանում է. „միշտ պատրաստ ենք“:

ԼԵՆԻՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՄԵՐՈՂԱԿԱՆ ՖՈԼԳՈՒՆԵՐ ԼԵՆԻՆԻ ԻԽՇԱՏԱԿԻՆ
ԵՎԻՐՎԱԾ ԲԵՄԱՂՐՈՒՅԱՆ ԽԱՄԱՐ

Բեմադրությանը կարող են մասնակցել 7-ից 20—պիոներ: Անհրաժեշտ է, վոր ղեկավարը լավ մշակի ամբողջ նյութը սկզբից մինչև վերջը:

Պլակատները պետք է լինեն գրված ընթեր-
նելի, վորպեսզի նույնիսկ դահլիճի հետևի կար-
գերում կարողանան տեսնել:

Բեմադրությունից առաջ անհրաժեշտ է, վոր
փորձված ղեկուցողը համառոտ կերպով թվի հե-
ղափոխության շրջանները (1898-1923) և Լե-
նինի մասնակցությունը: Ձեկուցումը չպետք է
է տևի 8-10 րոպեից ավել և պետք է լինի
փոքրիկ թեզիսներով: Բեմադրությունը պետք է
դրվի յեժտությամբ սկզբում ինտերնացիոնալ, ա-
պա գործողության զարգացման հետ միասին (դե-
կավարի ցուցմունքով) նվագում են բոլոր հեղա-
փոխական մոտիվները, վորոնք մերթ դադարում
և մերթ ուժեղանում են (նայած տեկստին):

Մասնակցողները պետք է ունենան պարզ
արտասանություն: Առանձնապես առաջին մաս-
նակցողը: Լավ է յեթե արտասանության և մուտքի
ժամանակ կանգնեն առանձին, առանձին խմբերով:
Նույնիսկ տեկստից, յերբ մեկը վորեւիցե բառ կամ
նախադասություն է ասում, մյուսները՝ բեմի վրա
գտնվածները, պետք է անեն այս կամ այն շար-
ժումները, վորոնք ընդգծեն տեկստի խոսքերը:
Այդ ամբողջը ղեկավարի գործն է:

Գլխավորը, բովանդակության մեջ, դա պլակատ-
ներն են: Նրանք շարունակ գրված յերեսով պետք
է դարձված լինեն դեպի լսողները և ժամանա-

կին շրջվեն, յեթե մյուս յերեսին ել կա տեկստ:
Լենինի հիշատակին նվիրված Բեմադրությունը
կթողնի դիտողների վրա լավ ապավորություն,
յեթե մասնակցողները լավ յուրացրած լինեն
բովանդակությունը:

1-ին Մաս

(Բեմի հետևյալ լարախումբը նվագում է ինտերնա-
ցիոնալ)

1-ի6 Մասնակցող. — Յեվրոպայում ուրվականն է շր-
պկասով 1848 թ. ջում—կոմունիզմի:

Պրոլետարիատը վոչինչ չի կոր-
ցնի կապանքներից բացի:

2-մասնակցող. — 50-տարի անց Ռուսաստանի սո-
պկասով 1898 թ. ցիալ-դեմոկրատական բանվո-
ական կուսակցություն:

27-տարի առաջ դուրս յեկավ պը-
րոլետարական հեղափոխության
առաջին գնացըր-Ռուսաստանի
կոմունիստական կուսակցու-
թյունը:

Դժվար է ճանապարհը, բայց գը-
նացըր սլանում է. թռչունից ա-
վելի արագ է սլանում: Պահ մի
դադար յեվ նորից գնացըն է սը-
լանում դեպի մի նոր կյանք:

3-րդ մասնակցող. — Ճեղքվածք բոլշևիկների յեվ մեն-
պկասով 1903 թ. շեվիկների միջով:

Լենինը կանչում է բանվորներին,
վոչ թե գրոհի այլ յերկարատեվ
պաշարման: Դեպի բարիկադները:

4-րդ մասնակցող.— Բուրժուազիայի զանգին քլուն-
պլակասով **1905 թ.** գով թրխկացրեց, **1905 թվի** պը-
րոխտարական վորոտը—Պետեր-
պուրգի Հունվարի 9-ից մինչև
Մոսկովյան դեկտեմբերի 25-ը:

5-րդ մասնակցող.—Անցյալի գիրկը ընկավ **12 տարի**
պլակասով **1917 թ.** յեվ յերեկվա հաղթանակող թըշ-
նամին տեսնում ե հակատին ուղ-
ղված փողը յեվ լսում ե կոմու-
նիստների հաղթական քայլը: Ա-
մեն ինչ համակված եր հրդեհով:
Միայն մի փոքրիկ խմբակ բոլո-
րին դեմ եր, քայց ահա **17-ին**
հուժկու կոմունարի պես վորտի
կանգնեցին գործարանները:

(Բեմի յետեվը լսվում ե Ինտերնացիոնալը մերթ դան-
դաղ մերթ ուժեղ):

6-րդ մասնակցող.— **Լ Ե Ն Ի Ն Ը Յ Ե Կ Ա Վ :**

ԿԻՆ պլակասով 18-6

Սպրիտի 1917 թ.

1-ի6 մասնակցող.—Վողջույն հանճարեղ մերենավա-
րին, սիրելի Իլյիչին:
Միջազգային պրոլետարական
հեղափոխության շոգեմեքենան
շահագործման թագավորությու-
նից՝ դեպի կոմունան վարպե-
տորեն տանողին:

2-րդ մասնակցող.—Հավերժ հիշատակ ընդմիշտ հե-
րոս մեռնողներին: Խաղաղու-
թյուն խրճիթներին:

Բոլոր.—

Կռիվ պալատներին:

2-րդ մասնակցող.—Ահա առաջնորդի առաջին խոս-
քերը:

7-րդ մասնակցող.—Հուլիսին արյունոտ արշալույս
Հուլիս 1917 թ. վառեց Իլիյը, բանվորների առաջ-
նորդը յեվ այդ որվանից մենք
բռնեցինք Հոկտեմբերի ուղին,
կռեցինք մեր գորությունը:

(Որկեստըը նվագում ե Ինտերնացիոնալ—փոթորիկ:
Ամեն մեկը շուռ ե տալիս ձեռքի պլակատը յեվ ըս-
տացվում «Հոկտեմբեր»):

4-րդ մասնակցող.—Թշնամու դիրքերում այլեվա ա-
ղոթքներ չեն հնչում: Դա Հոկ-
տեմբերյան հողմն եր մոլեգնում:

5-րդ մասնակցող.—Դրանք դեկրետներն են կրակե
թռչունների նման, զարկում բո-
լորին, ջղերի ռադիո լարերին:

6-րդ մասնակցող.—Ո՞վ ասաց—բավական ե, ո՞վ ա-
սաց հոգնեցինք:

Բոլոր.—

Մենք ուժեղ ենք առաջվա պես,
մենք սպառնում ենք սրով:

6-րդ մասնակցող.—Կոմունայի լոզունգները մենք
կռում ենք պողպատից,

Բոլոր.—

Մենք գալիս ենք:

6-րդ մասնակցող.—Մենք գալիս ենք:

Բոլոր.—

Մենք գալիս ենք:

1-ի6 մասնակցող.—Բանվորներ յեվ գյուղացիներ, ա-
պստամբության զրոհ տվեք հար-
ված հասցրե՛ք:

2-րդ մասնակցող.—**Բոլորի սրտերում մի ցանկություն կա:** Առանց գազանությունների յեվ առանց վրեժի վերցված ե պալատը:

Բոլորը.— Վերցված ե պալատը:

(Որկեստրը բեմի յետեվ նվագում ե ուժգին):

9-րդ մասնակցող.—**Բրեստ, գերմանացին չի քնու-**
(**հագնված ե գինվո-** նա այդպիսին չի: Վիլհելմի բա-
րակաճ սարագով, պը- նակը Պսկովն ե զրավել, Գեր-
լակասով) 1918 թ. մանացիք սպառնում են, մոտ եմ
Բրեստ փոթորիկը:

1-ին մասնակցող.— Իլլիչի կոչը:

Բոլորը.— Աչքերդ լավ բացեր:

2-րդ մասնակցող.— **Բոլորի հետ Իլլիչը հակառակ եր:**

Բոլորը.— Ի սեր հեղափոխության նա զը-
նաց Բրեստ:

3-րդ մասնակցող.— **Նա ասում եր:**

1-ին մասնակցող.— Մենք չենք վերացրել բոլոր խո-
չընդոտները, դեռ վաղ ե վեր-
ջը գուշակել:

Բոլոր կողմերից են սեղմում մեզ
չար սողունները: Ընկերներ մենք
կրակի ողակի մեջ ենք:

Բոլորը.— Բայց մենք կսեղմենք մեր շար-
քերը, վեր կբարձրացնենք մեր
ալ—դրոշակը:

1-ին մասնակցող.— Ընկերներ, կացնի պաշարման ո-
ղակը:

Բոլորը:— Յեվ կհաղթվի նենգ թշնամին:

10-րդ մասնակց.—**Այդ նա գոռաց պողպատի պես,**
(**գլուղացու սարա-** այդ ով ե այնտեղ բնած, հրդեհ-
գով) պլակասով: ների ավերակում: **21-թիվ փե-**
1921 թ. ՆԵՊ-ը տրվար, ընկերներ դեպի ֆրոնտ
աշխատանքի:

5-րդ մասնակցող.—**Աշխատավորներ**
բոլորը.— Գլուխներդ բարձր,

6-րդ մասնակցող.—**Աշխատավորներ**
բոլորը.— Քայլերդ հաստատ.

7-րդ մասնակցող.—**Նոր շրջան ենք անցնում:**
բոլորը.— Գյուղացու դրության բարելավ-

ման:

2-րդ մասնակցող.—**Գյուղացուն հարկավոր են մեքե-**
նաներ:

3-րդ մասնակցող.—**Բանվորին վառելիք յեվ հաց:**

4-րդ մասնակցող.—**Ուրիշ յելք չկա:**

5-րդ մասնակցող.—**Դեպի զոդումը:**
բոլորը.— Մտցնում ենք Ն ե Պ-ը:

10-րդ մասնակցող.—**Այս տոնն ու հաղթանակն մեծ**
պլակասով 8-սարի դարերի հետքն են հրեղեն—լսե-
1917.1923 թ. ցեք բոլորդ—խորհուրդների հան-
րապետությունը:

բոլորը.— Գոյություն ունի 8-ը վիթխարի
տարիներ:

Վ ա ը ա գ ու յ ը

1-ի6 մասնակցողը Այս որերին... բոլորին, բոլորին, **նորից գուրս է գալիս** բոլորին... Լսեցեք: Նախ յեվ ա-
սեվ **սրջանակում:**

Լ Ե Գ Ի Գ Ը
Մեռավ
1924
Հ ու Ե վ ա ր ի
21-ի6
18-ժամ 50-րոպե

ռաջ դուք պատմագիրներ, պատ-
մությունը գրի առնողներ, գր-
ողներ, եպոպեյ կերտողներ պո-
ետներ, պոետներ յերգողներ...
1924-թ. Հունվարի 27-ին 16-ժա-
մին, կանգ առավ համաշխարհա-
յին պատմության զարգացումը,
միլիոնավոր սրտերի բաբախու-
մը կենդանի յեվ անկենդան մար-
մինների շարժումը: Դադարը տե-
վեց «5-րոպե»: Այդ ժամանակ
գերեզման իջեցրին մեծագույն
առաջնորդին, վորն առաջ եր
շարժում ամբողջ մարդկության
պատմությունը: Հիշեցեք նրա ա-
նունը «Լ ե ն ի ն» Լենինը—ճնշը-
վածների բարեկամը մեռավ 1924
թվի Հունվարի 21-ին վեց ժամ
50-րոպեյին ցերեկվա, սգի մեջ
թողնելով համայն աշխատավո-
րության: Նրա ուղեղը գործում
եր ամբողջ յերկրագնդի համար:
Նիարդաթելերը նրա, ելեքտրա-
լարերի նման անչափ շիկանա-
լուց այրվեցին: Այդ նա եր տա-
րածում աղջամուղջում՝ ծայր-ա-
գավառներում՝ աշխատավորու-
թյան ազատագրման կռվի կոչը,

վորպեսզի ստեղծի պրոլետար-
իատի դիկտատուրա յեվ դրա-
նով հասնի անագգ ու անդասա-
կարգ առանց թշնամանքի ու նա-
խանծի, առանց ճնշման յեվ մար-
դը մարդուն շահագործման հա-
սարակարգին:

(Առաջին մասնակցողի ճառի ժա-
մանակ բոլորը հավաքվում են
բեմի վրա, կոլլեկտիվ արտասա-
նության համար)

Սու՛ս, մենք առաջնորդի մահ-
վան մասին ենք խոսելու:

բոլորը.—

1-ի6 մասնակցող.— Մեր շարքերով ինչպես հարված
անցավ մի լուր:

2-րդ մասնակցող.— «Լ ե ն ի ն Ը Մ Ե Ռ Ա Վ»

բոլորը.— Մարդու հավատը չի գալիս:

3-րդ մասնակցող.— Միթե՞ կարող եր Լենինը մեռնել:

բոլորը.— Քանի վոր նա կենդանի է բոլո-
րիս սրտերում:

4-րդ մասնակցող.— Խաղաղ գյուղերով յեվ քաղաք-
ներով անցավ ռադիոյի ճիչը:

5-րդ մասնակցող.— Մեռավ մեր առաջնորդը Վլադի-
միր Լենինը, մեռավ մեծ ծերու-
նին:

6-րդ մասնակցող.— Գործարաններում,

7-րդ մասնակցող.— Բարձունքներում,

բոլորը.— Դաշտերում,

8-րդ մասնակցող.—Վորտեղ հարազատ եր «Իլիչ»
անունը:

2-րդ մասնակցող.—Միլիոնավոր ցավերով
բոլորը.— Բոլոր սրտերում կարծազանքվի
այդ գույժը:

3-րդ մասնակցող.—Ամենքին համաշխարային ու մեծ
վիշտն ե համակել:

4-րդ մասնակցող.—Նույնիսկ չհասած սրտերն են
վողբում:

5-րդ մասնակցող. Բայց մեզ այրում ե մի բոցոտ
միտք:

բոլորը.— Լենինը կենդանի յե:

6-րդ մասնակցող.—Լենինը կենդանի յե:

բոլորը.— Լենինը կենդանի յե:

1-ի 6 մասնակցող.—Ընկերներ Լենինը չկա. կտրվեց
մեծ կյանքի թելը: Բժշկություն-
նը չկարողացավ անել այն, ինչ
վոր նրանից սպասում յեվ պա-
հանջում եյին միլիոնավոր մարդ-
կային սրտեր: Ինչ մեծ ցավ ե
այս փոքրիկ բյուլետենում, սեղմ
շրջանակի մեջ, խոսքերի նշանա-
կությանը այս ինչ դժվար ե հաս-
կանալ. այսինչ ժամին, այսինչ
ժամանակ մեռավ Լենինը, Մե-
ռավ մեր Իլիչը:

6-րդ մասնակցող.—«Զլալ դիակների վրա»...:
(յերգում եմ)

1-ի 6 մասնակցող.—

Մեղոգեկամացիա
նվիրված Լենինի հի-
շատակին:

2-րդ մասնակցող.—Սգի բայերգում

բոլորը.— Սշխատանքի բայն անհավա-
սար ե:

3-րդ մասնակցող.—Ուսերն են նվում ցավից, աչքե-
րն են վշտով համակված:

4-րդ մասնակցող.—Սգի բայերգում:

բոլորը.— Սրյան գույնի դրոշակները սեվ
յերիգով են պատված:

8-րդ մասնակցող.—«Դուք զոհ զնացիք»:

Յերգում ե

5-րդ մասնակցող.—Աչքերդ այրող պողպատից

բոլորը.— Վառվում եյին ինչպես մոմ:

7-րդ մասնակցող.—Խլեցին մեր առաջնորդին:

բոլորը Խլեցին Իլիչին

5-6-րդ մասնակ.— Այլեվա չի լսվի,

բոլորը.— Նրա կրակոտ հառը:

11-րդ մասնակցող.—Բայց Լենինյան դիրքերից,

բոլորը.— Մենք յերբեք չենք իջնի:

2-րդ մասնակցող.—Ցեվ պայքարում

բոլորը.— Հանուն Կոմունիզմի:

3-րդ մասնակցող.—Լենինը:

բոլորը.— Մեր դրոշն ե:

4-րդ մասնակցող.—Լենինը:

բոլորը.— Մեր դեվիզն ե:

5-րդ մասնակցող.—Լենինը մեր դպրոցն ե:

բոլորը.— Լենինյան ուղիով,

7-րդ մասնակցող.—Մենք բոլորս ծանր պայքարում,

բոլորը.— Կզնանք Վ. Կ. Պ. յետեվից:

11-րդ մասնակցող.—100—հազար դազգահներին Վ. Կ. Պ. ահա ամենալավ պսակը առաջնորդի գերեզմանի վրա:

Հարյուր հազար դազգահներին Վ. Կ. Պ. ահա ամենալավ պսակը առաջնորդի գերեզմանի վրա:

1-ին մասնակցող.—Ամեն մեկը յուր մտքում պետք է լավ պահի այն, վոր «Հկա առաջնորդը», բայց միթե մեռել է նա յեթե այսոր դազգահներին Հարյուր հազար.

բոլորը.—

1-ին մասնակցող.—Իսկ վաղը Վ. Կ. Պ. կանցնեն

բոլորը.—

2-րդ մասնակցող.—Չլալ

3-րդ մասնակցող.—Չլալ

4-րդ մասնակցող.—Չլալ

բոլորը.—

2լալ Իլլիի համար:

5-րդ մասնակցող.—Թող լան արցունքներով կրակի բոցոտ աչքերը:

բոլորը.—

1-ին մասնակցող.—Մի թուլանար,

2-րդ մասնակցող.—Մի մոռացվիր,

3-րդ մասնակցող.—Մի ծուլանար

4-րդ մասնակցող.—Ձեռքով սեղմիր լծակը:

5-րդ մասնակցող.—Լ ե ն ի ն

բոլորը.—

Մենք հիշում ենք:

6-րդ մասնակցող.—Լ ե ն ի ն ը

բոլորը.—

Մեր մարտահրավերն է

1-ին մասնակցող.—Դրոշներդ բարձր

բոլորը.—

Բոցավառման

2-րդ մասնակցող.—Ամուր կաց բանվոր

բոլորը.—

Սեղմիր

3-րդ մասնակցող.—Լենինը միշտ

բոլորը.—

Մեզ հետ է:

4-րդ մասնակցող.—Լենինը միշտ

բոլորը.—


Կենդանի յե (Պառլա)

բոլորը.—

Կեցցե Լենինյան կոչը:

(Ինտերնացիոնալ)

Վարագույր



Վ. Ի ՈՒԼՅԱՆՈՎ-ԼԵՆԻՆ

(1870—1924)

ՅԱՆՈՒՄԻ ԿՍԿԻԾ

Բոլոր կարմիր զբոհները վրա
յերեկ ձգվել եր մի սև գիծ.
բոլոր սրտերը բոլոր կրակ
զգում եյին մի սուր կակիծ:

Թաղում եյին նրան յերեկ
մեր որերի հանճարը վեհ,
նա, վոր Հոկտեմբերը բերեց
տառապանքի մարդուն նվեր:

Ու թաղեցին յերեկ նրան
սարսուռներում հողի-ձյունի.
նա, վոր ջերմ եր—ինչպես կրակ—
վոր կոմսոմոլ, պիոներ ծնեց:

Ու թաղեցին յերեկ նրան...
մեր շարքերը իրենց հերթին
պատգամներով իր հուրհրան
վաղվա կյանքը թող վոր կերտեն:

Այդ կրկնի պսակը մեր
խիզախ Ընկերոջ շիրիմին,
կսկծի հեռ արցունքաբեր—
վոր զգում են բոլորն հիմի:

ԼԵՆԻՆ ՔԵՌԻՆ

I

Հայրը գենքով յեկավ գործարանից եդ որը:
Դեմքը խիստ եր, անգամ մի քիչ մուսյլ:
Յերբ մոտեցավ, ուզեց գրկի հորը՝
կամաց մի կողմ հրեց հայրը նրան:

Անխոս նստեց թեյի: Միտքը գուրսն եր, հեռուն եր:
Աչքը յերկար-յերկար հառել եր մի բանի:
Դեմքին դեռ մնացել եր գործարանի մուրը:
Այդ յերեկո խոփու եր հայրն Իվանի:

„Գնում ենք, մորն ասաց, մենք լեհերի վրա.
հանել ե լեհերին մեր դեմ ելի Անտանտը:
Բայց հուլս ունենք, կնի՛կ, վոր կջարդենք նրանց,
կշարտենք—անթիվ տանկերով ել գան թե:

„Դենիկինն եր յերեկ, հետո Կոլչակն յեկավ.
ու լեհերն են հիմի . . . Վոչինչ, կնիկ!
Կարմիր բանակը մեր բանվորական
սովորել ե քշել նրանց բնից! . . .“

Նստեա յերկար խոսեց հայրը մինչև գիշեր,
խոսեց կովի մասին՝ բուրժուալի դեմ:
Անցած հազար-հազար դեպքեր հիշեց,
հիշեց հուլիս ինչ-վոր ու հոկտեմբեր:

Յեւ նա տեսավ, տեսավ թե ինչպես հոր
աչքերը հուր դարձան հետզհետե.
լուսարձակներ յերկու դարձան վոնց վոր,
վոնց վոր ուռւբեր, վոր նա պիտի եգուց նետե:
Ու վառելով եղպես իր բորբոքուն հայացքը՝
հայրը թռավ հանկարծ, յելավ վոտքի:
Յեւ Իվանին թվաց թե
այրող գնդակ անցավ իր հոր մտքից:

Վոտքի թռավ եղպես ու սրբելով քրտինքը՝
հայրը ասավ. — Արդոք հասկանու՞մ ես, կնիկ, —
մեր զորքերին եգուց խոսելու ե ինքը.
ինքը Լենինը մեզ պիտի ճամբա դնի! . . .

Հայրը եսպես ասավ ու գնաց քնեց,
վոր առավոտ ծեզին յերթա բանին. —
Բայց խոսքերը նրա վերջին են
վառվեցին սրտում Իվանի . . .

II

Հարկ չկա յերկար պատմելու
եղ բանվորի խօսի՝ եղ Իվանի մասին:
Կապույտ աչքեր ունեւ, գանգուր գլուխ.
գե ուռւ տղա եր մի՝ ութ տարեկան հազիվ:
Իր բանվոր հոր հետ միասին
գործարան եր գնում նա յերբեմն:

Կամ հավաքած իր քաջ ընկերներին դրսի՝
նա խաղում եր „Կռիվ բուրժուալի դեմ“:

Ձիավոր եր լինում միշտ ինքը՝
նստած ձեռնափայտին պապի՝
քշում եր փայտե ձին, մինչև ջերմին քրտինքը
վողողելով վրեն՝ վերջ տար թափին:

Մտածում եր Իվանը. — յերբ մեծանա
պիտի շոֆեր դառնա, կամ ողաչու.
պիտի մանի հետո — Կարմիր Բանակ . . .

— Դեռ սպասիր, բուրժուալ . . .

— դեռ կգա Վալյենկա-ողաչու, —

— դեռ մեծանա . . .

Սակայն հայրը եգուց պիտի գնա . . .

Պիտի ճամփա դնի նրանց — ընկեր Լենինը . . .

Պիտի խոսքեր ասի նրանց եգուց:

Իսկ ինքը . . .

Պիտի եսպես տնում ելի նստած մնա՞ —

արդեն հասակն առած պատանի ե թեկուզ! . . .

Յեւ նա գիտե արդեն Լենին քեռուն.

հրեն նայում ե նա ենտեղ պատից՝
խորամանկ մի ժպիտ աչքերում,
ահագին մի միտք ճակատին:

Նդ նա ե, Լենինը: Այսինքն նա,
վոր ղեկավարն ե բանվոր դասի.

նրա նկարն ե միշտ պլակատների վրա,
միշտ նա ե, ամենուր՝ Մարքսի հետ միասին . . .

Հայրը հաճախ նրան ցույց ե տվել յերկու
եղ մեծերի պատկերքը:

Անգամ ենտեղ — իրա ալբուբենի գրքում
նրանց նկար կա:

Սովորել ե հորից յեվ գիտե նրանց յերգը՝
,, — Յե-լի-ի-ի-ր — բո-ղո-քի-ի-ի-ր — քան-վո-ո-ո-ր
դա-սա-կա-ա-ա-րգլ“

Պատմել ե հայրը նրան,
վոր Լենին բեռին
խելացի ե, մեծ ե ու քաջ:
Ենքա՛ն, ենքա՛ն, ենքա՛ն,
վոր աշխարքում ուրիշը — եղպիսին չկա:
Պատվիրել ե, վոր ինքն ել յերբ մեծանա
յերթա նրա — եղ մեծ Լենին-քեռու ճամփով,
վորի վրա թեկուզ հազար փուշ կա ցանած,
բայց գնում են վորով գյուղացի ու բանվոր . . .

Բա՛ս.

Եսպիսին ե Լենին-քեռին!
Յեվ վաղը նա ինքը պիտի խոսի:
Պիտի անցնի իր հայրը՝ գենքը ձեռին —
յեվ Լենինին լսի . . .

Եղ հո նման ե — զարմանք բանի՞ . . .

Յեվ վորոշում ե Իվանը.

— Ինչ ել լինի՝

վաղն առավոտ կանուխ պիտի փողոց յերթա
յեվ տեսնի — ընկեր Լենինին . . .

III.

Արդեն գնացել եր հայրը, յերբ արթնացավ:
Շտապ հագավ շորերը յեվ թռավ փողոց:
Վազ, վազ, վազ անցավ իրենց փողոցը
և յեկավ հարմիր հրապարակը՝ բանվորներով վողոդ:

Ծփում եր կարմիր հրապարակը,
վոնց վոր մարդկային մի անտառ:

Հավաքվել եր վոնց վոր

աշխարքը բովանդակ:

Դիփը բանվոր մարդիկ,

հոր պես հագած:

Դրոշակներ անթիվ,

անթիվ պլակատ:

Հրմշտկելով մարդկանց ու բռնելով՝
փորձեց առաջ յերթալ, հորը կոչել:

Փորձեց յենել կողքի մի բանվորի վրով՝

բայց բանվորը — պապի ձեռնափայտը հո չէր:

Եղպես սեղմած — մնաց:

Փորձեց ելի:

Պատահեց մի մարդ հայհոյող:

Նորից մնաց՝ հոգին մորմոքով լի:
Բայց ի՞նչ տեսներ — իր են մի թիզ բոյով! . . .

Հանկարծ մի ծով ամբողջ
վոնց վոր գոռա —
դղրդաց հրապարակը,
գոռաց ուռռա:
Հետո լռեց ամբողջը.
բանվոր մի կին
իր կողքի ընկերոջը
շշնջաց՝

„Լենինը! . . .“

Փսփսաց սա ել կողքինին.
Ու շրթից շուրթ անցավ
„Լենին! Լենին! . . .“

Հասկացավ Իվանը.
— Ենտեղ ե նա . . .

Շփոթված՝ գլխարկը հանեց —
և սեղմեց ատամները՝ բարկությունից դեղնած:
Ել ճար չկար: Տեսավ՝ տեղ չէն տա իրեն:
Յեւ վորոշեց՝ անի, ինչ ել լինի! —
Վտաքը խոթեց հանկարծ գրպանը կողքինի —
և բարձրացավ վրեն! . . .
Թռավ ուսին նստեց
մի բանվորի.
բայց բանվորը ներքեվ շարտել
չփորձեց եղ խոխին նորից . . .

Պտույտ յեկավ գլուխը, սիրտը ամուր թակեց:
Վոնց վոր աշխարհը վողջ նվիրեցին նրան:
Նայեց . . . Լենին-քեռին կանգնած եր տախտակե
ամբիոնի վրա . . .

Ձեռքը առաջ մեկնած, գլուխը բաց,
վոնց վոր տնում կախած են նկարի խորքից —
իր հայրիկի ձայնով, մի փոքր բարձր՝
նա պատգամ եր ասում բանվորական զորքին . . .

Յեւ Իվանին հանկարծ ենպես թվաց,
թե տեսել ե ինքն նրան վաղուց.
վոր եղ Լենին-քեռին պիտի սիրեր իրան,
յեթե տեսներ „բուրժույ“ „գորբ“ խաղալիս!
Ու մտածեց՝ եզուց յերթա տեսնի նրան,
ասի՝ ինձ ել դրկի, գնամ բանակ.
ասի՝ ուզում եմ յես կարմիր շոֆեր դառնամ —
Լենին քեռուն բոլոր պլանները բանա . . .

Եսպես՝ աչքերը չիռ Լենին-քեռուն հառած՝
յերազուս եր Իվանը:
Հանկարծ լռեց Լենինը:
Ու դղրդաց նորից բանվորական ուռռան.
ձեռքը մեկնեց առաջ — ու բղավեց ինքն ել:
Ձորքը ծփաց հետո ու շարժվեց առաջ:
Ու դրոշի վրա դիմացի նա
տառ-տառ կարդաց վաղուց իմացած իր բառը,
„Յերրորդ Ինտերնացիոնալ“:

Դրոշակներ նորից: Եդ ինչքան են . . .

Յեվ կապելով իրար տառերն հազիվ՝
կարգաց նորից Իվանը՝

„Կորչի բուրժուազին“:

Յերգում եր գործը „Ինտերնացիոնալ“:
Ինքն ել գիտեր յերգել: Յերգեց Նայեց՝ հեռուն,
զինվորների նման, զլուխը բաց՝
յերգում եր յերգը նույն — Լենին-քեռին . . .

Ու խանդոտ մի բոց աչքերին՝
նայեց նորից Իվանը . . . Տեսավ՝ հրեն
հայրը քայլում ե՝ մեծ մի հրացան ձեռին —
ու նայում ե, նայում Լենին-քեռուն . . .

Ուզեց կանչի նրան,
բայց եդ պահին հանկարծ
մի ահուելի ուռա
կրկին զնգաց:
Գոռում եր գործը դիփ,
ինչքան վոր ձեն ուներ.
ախ, ունենա՞ր ինքն ել
մի բարձր ձեն գոնե . . .

Թնդում եր ողը
նրանց ձենից,
վոնց վոր վորոտը՝
„Լենին! Լենին!“

Ու ինքը, Լենինը, կանգնած ենտեղ . . .

Նման եր վողջը — յերագի . . .

Յեվ վորոշեց Իվանը, վոր անպայման յերթա —
իր բոլոր պլանները Լենին-քեռուն ասի . . .
Յերթա ասի, վոր ինքը կուզե շոֆեր դառնալ,
կամ ողաչու կարմիր՝ թռչել անահ . . .
Եդ հարազատ, եդ մեծ Լենին-քեռու առաջ
իրա բոլոր, բոլոր պլանները բանա! . .

Լ Ե Ն Ի Ն Ի Ո Ր Ը

«Լենինի որը» բեմադրությունը կազմված ե չորս
առանձին-առանձին մասերից: Ամեն մի մասն ամ-
բողջություն ե ներկայացնում յեվ կարելի յե մաս-
մաս բեմադրել:

Բեմը զարդարել սեվ յեվ կարմիր կտորներով.
բեմի խորքում Իլյիչի մեծադիր նկարը:

Բուպորը (գրամաֆոնի խողովակ) տեղավորել
բեմի աջ կամ ձախ կողմում: Խոսողը ծածկված լինի
կարմիր կամ սեվ կտորով, այնպես վոր չերեվա:

Գործող անձինք պետք ե շատ լավ իմանան ի-
րենց դերերն ու խոսքերը, վոր բեմադրությունն անց-
նի աշխույժ յեվ հետաքրքիր:

Արտասանել խոսքերը շատ պարզ, շեշտված:
Վոտանափորները տալ պիտներական յերգերի յեղա-
նակներով:

«Լենինի որը» բեմադրությունը կազմելիս ոգտը-
վել ենք Իրկուտովի «Будь ленинцем» բեմադրու-
թյունից: Բոլոր վոտանափորները վերցված են Դիլիջա-
նի յեվ Յերեվանի պիտներական պատի թերթերից:

ԼԵՆԻՆԻ ՈՐԸ

(Պիոներները դրոշակներով չերգելով գալիս են)

Գալիս ենք, գալիս
քո գծած ուղիով
անվախ, աներկյուղ
գալիս ենք անվերջ:

Գալիս ենք ահա
մենք տարածելու,
կարմիր մտքերդ
ամբողջ աշխարհում:

Գալիս ենք, գալիս,
գալիս ենք անվերջ
կարմիր դրոշակներով
ու կարմիր չերգերով:

(Շարժվում են բեմի վրա)

(Կուլեկտիվ արտառանություն.)

Ձկա Լենինը բանվոր-գյուղացու
մեծ ու հանճարեղ ուսուցիչը:
Ձկա յեվ մեր պիոներներին
սիրելի հայրը:

Նա չկա, չկա այլևս
յերկրի վրա.

Նա դադարել է աշխատել
բանվոր-գյուղացու շահերի համար:

Մեկը

Նա մեռավ

յեվ մեզ թողեց

առանց ուսուցչի ու առանց հոր:

Բոլորը

Բայց մենք չպետք է տխրենք,
մենք չպետք է լանք ու կոծանք,

Մեկը

Այլ պետք է

գնանք նրա ուղիով,

վոր գծել է նա

Բոլորը

Մեզ համար:

Մեկը

Մենք չենք թողնի նրա գործը,

նրա ծրագիրն անավարտ:

Առաջ է գալիս մեկը մեծ պլակատով. «1924 թ. հուն-
վարի 21-ին մեռավ Լենինը»

Բուպորը —

Պետական հայտարարություն.

Հունվարի 21-ին ժ. 6 յեվ 50
րոպեյին Մոսկվայի մոտ, Գոր-
կիյում հանկարծամահ յեղավ
Վլադիմիր Իլյիչ Ուլյանով Լե-
նինը: Վոչ վոք չեր սպասում,
վոր նա կմեռնի: Վերջերս Վլա-
դիմիր Իլյիչի առողջությունը
դեպի լավն եր գնում: Ամեն
ինչից յերեվում եր. վոր նրա ա-
ռողջությունը կվերականգնի.

Բոլորովին անսպասելի, արագ
կերպով, վատացավ Վլադիմիր
Իլյիչի դրությունը յեվ մի քանի
ժամ հետո նա մեռավ:

Են ինչ որ եր հունվարի 21-ը,

Առաջին

Յերկուրդ

Յերուրդ

Բոլորք

Մեկը (առաւս.)

Բոլորք

Մեկը

Բոլորք

Մեկը

Բոլորք

Մեկը

Բոլորք

Մեկը

Բոլորք

Բուպոր

Մեկը (մեծ պլակաս.) «Լենինյան կոչը տվեց 200,000-ից ավելի նոր կուսակցականներ»:

Բուպոր—

են ինչ լուր ստացանք մենք.

Հեռագիրը ինչ անգութ եր,

Վոր այդ լուրը տվեց մեզ:

Բանվորն այսոր կարմիր յերկրի
սգում ե հիմի շիրիմիդ առաջ.
քո սուգն ե սգում,

Վոր չկաս հիմի:

Ամբողջ աշխարհից յեկել են այ-
սոր քո սուգն են սգում,

Վոր չկաս հիմի:

Բանվոր, գյուղացի յեկել են
Քո գործն են հիշում, քո գործը
վսեմ:

Ու կանցնեն այսպես հազար
տարիներ, քո հիշատակը

Կմնա անվերջ:

Կանցնեն, կմարեն շատ վառ
կրակներ, բայց քո

Խարույկը կմնա անշեջ:

Բանվոր դասակարգի պատաս-
խանն այդ մահվան—իր ամե-
նալավ ներկայացուցիչները կու-
կուսակցության տվեց:

«Լենինյան կոչը տվեց 200,000-ից ավելի նոր կուսակցականներ»:

Կուսակցության փոխարինող
կոմսոմոլը Լենինի անունն ե
կրում: Կենտրոնական կոմիտեն
կոչ ե անում ԼԿՅԵՄ անդամնե-
րին:

Բոլորք—

Բուպոր—

Բոլորք—

Մեկը—

Բոլորք—

Մեկը—

Բոլորք—

Մեկը—

Բոլորք—

Մեկը—

Բոլորք—

Մեկը—

Բոլորք—

Մեկը—

Յերկուրդ—

Յերուրդ—

Բոլորք—

Բուպոր—

Մեկը—

Յերկուրդ—

Բոլորք—

Մեկը—

Ամենքին, ամենքին, ամենքին.

Լավ լսեցեք

Սովորել, սովորել, սովորել:

Մենք, պիտոներներս փոխարի-
նողների փոխարինողներն ենք:

Մենք կիրագործենք ավանդները
Ընկեր Լենինի թողած:

Վառ կպահենք մենք անունը

Մեծ առաջնորդ՝ Լենինի:

Վորքան ել անցնեն տարիներ,
դարեր, դու միշտ կենդանի մեզ
հետ ես Լենին:

Դու ցույց ես տվել

Մեծ նախապարհը՝ դեպի կոմմու-
նիզմ:

Հանգիստ կաց Լենին
առաջնորդ մեր մեծ,

Մենք միշտ կլինենք

Տոկուն

Համարձակ

Մարտիկը

Գալիք համաշխարհային հեղա-
փոխության:

Ամենքին, ամենքին, ամենքին.

Բանվոր,

Դյուղացի՛,

Աշխատի՛ր,

Իսկ դո՛ւ,

Բուրբ— Կարմիր բանակ,
Մեկը— Բո զիրքերում
Բուրբ— Հսկի՛ր:
Բուրբ— Լսո՞ւմ ես խորհրդային Միու-
 թյան այս կոչը մեծ՝
Մեկը— Սկսածը՝
Մյուսները— Ասել ե
Բուրբ— Վերջացրե՛ր
Մեկը— Մեր մեծ ղեկավար
Բուրբ— Լենինը:

(Պիոներները շրջվում են անցնում դեպի բեմի խորքը: Հետագայում առաջ են գալիս միայն գործող անձինք):

2. Մեկը պլակատով՝ «ԻԼՅԻՉԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ» գալիս է առաջ անցնում բեմով և կանգնում աջ կողմը: (Գործողներ՝ յերեք պիոներ խոսողներ, մեկը—պլակատով, Բուրբը):

Առաջին պիոներ— Վաղիմիր Իլյիչ Լենինը, մեր Իլյիչը բանվոր դասակարգի մեծ առաջնորդն էր:

Յերկուրդ պիոներ— Նա յերեք իր համար չի ապ-
րել:

Յերուրդ պիոներ— Նա ապրել է բանվոր դասա-
կարգի համար:

Յերեք միասին— Նրան հիշելը հերիք չե, պետք է սովորել շարունակել նրա գործը: Պետք է ուսումնասիրել նրա պատգամները,

Առաջին— Ամեն մի պիոներ պետք է իմա-
նա այդ.

Յերուրդ— Հիշիր առաջին պատգամը.
Միասին— Պիոները հավատարիմ է բանվոր դասակարգի գործին— Լենինի պատգամներին:

Մեկը պլակատով վրան գրած՝
 «Պիոները հավատարիմ է բանվոր դասակարգի գոր-
ծին— Լենինի պատգամներին»:

Առաջին— Հիշիր, վոր նրա հաղթության հիմնաքարը գիտությունն է յե-
ղել:

Յերկուրդ— Նա լավ է ճանաչել այն շրջա-
պատը, ուր գործել է:

Յերուրդ— Նա լավ է ճանաչել պայքարող իր ընկերներին— ճանաչել է յեվ թշնամիներին:

Միասին— Նա հաղթել է, վորովհետեւ լավ է իմացել այն ճանապարհը, վո-
րով նա ընթացել է:

Մեկը (պլակատով)— Սովորելը պահանջ է դարձել:

Առաջին— Իլյիչը գիտեր նոր ուղիներ գրո-
նել:

Յերկուրդ— Իլյիչը գիտեր խուսափել անո-
գուտ կովից:

Յերուրդ— Իլյիչը գիտեր խնայել բանվոր դասակարգի յեվ կուսակցության ուժը:

Միասին— Յեվ նա միշտ հաղթել է, վո-
րովհետեւ յերեք չի նահանջել:

Առաջին— Իլյիչի ընկերները կարող եյին

լինել միմիայն իր հետ պայքարողները:

Ֆեբրուրդ — Նա միշտ ատելություն էր վերաբերում դեպի բանվորական զործի թշնամիները յեվ բանվոր դասակարգի դավաճանները:

Ֆեբրուրդ — Նա ատում էր կապիտալիստներին ու բուրժուաներին:

Միասին — Վորովհետև նա վոչ թե խոսքով, այլ գործով էր պաշտպանում բանվոր դասակարգի շահերը:

Բուպուր — Պիոններ հիշիր զոդումը:

Մեկը (պլակատով) — Չմեռն սկսած զործը ամառը շարունակիր:

Առաջին — Ահա Իլյիչի պատգամները:

Ֆեբրուրդ — Սովորիր այդ յեվ հետևիր դրանց:

Ֆեբրուրդ — Այն ժամանակ դու իսկական լենինական կլինես:

Բուպուր — (Ֆեբրուրդ, պլակատ յեվ բուպուր միասին) — Պիոնները հավատարիմ են բանվոր դասակարգի գործին — Լենինի պատգամներին:

Գործող անձինք լուռ շրջվում են և գնում իրենց տեղերը բեմի խորքում:

3. Ոգնություն կուսակցության յեվ կոմսոմոլին

Դահլիճից ձայներ՝

Առաջին — Լենինը չկա.

Ֆեբրուրդ — Լենինը չկա.

Ֆեբրուրդ —

Միասին —

Առաջին —

Ֆեբրուրդ —

Ֆեբրուրդ —

Ամենքը —

(Բեմի վրա հերթով առաջ են գալիս չերեք պիոններ)

Առաջին —

Ֆեբրուրդ —

Ֆեբրուրդ —

Դահլիճից ձայներ՝

Առաջին —

Ֆեբրուրդ —

Բուպուրը բեմից —

Մեկը պլակատով —

Իլյիչը մեզ հետ չէ:

Հաղթանակի ճանապարհին ո՞վ են մեր զրոշը տանում:

Մենք կորցրինք մեծ զեկավարին ու մեր հորը:

Մենք կորցրինք Լենինին:

Այս ծանր տարիներին ո՞վ կը փոխարինի մեզ մեծ պայքարողին:

Ո՞վ:

ԲԿՄ-են ինչպես միշտ՝ կտանի մեզ դեպի հրդեհը պայքարի միլիոնավոր մասսաների համար. ԲԿՄ-ում կենդանի յե միշտ Լենինը մեծ:

Կոմսոմոլը նրա հետևից ընթանում է փոխարինելու միշտ պատրաստ:

Չկա մեր սիրելի Իլյիչը, բայց մեր մեջ անմահ է Լենինը:

Իսկ Պիոններն ո՞րը,

Խիտ շարքերի մեջ մենք ել կը մտնենք:

Չեր պատգամը ձեզ կասի, թե պիոններն ինչ պիտի անի:

Պիոնները կոմունիստի, կոմսոմոլի փոքր յեղբայրն ու ոգնականն են:

Դահլիճից ձայներ՝

Առաջին—

Բայց ի՞նչպես ոգնել, ի՞նչով,
վո՞րտեղ:

Բեմից չերեքը միասին՝

Ո՞ր գործ շատ կա,

Աշխատե՞ք...

Խորհուրդների յերկրում աշխա-
տանք շատ կա, լավ նայեք.—

(Լույսը հանգչում է հերթով ցույց են տրվում կենդա-
նի պատկերներ)

1) լուսավորվում է բեմը— կենդանի պատկեր.
մայրը կար է անում, պիտները նրա համար լրագիր է
կարդում:

2. պատ. Խրճիթ-ընթերց. անկյուն. պիտները
զեկուցում է.

3. պատ. Պիտներներն աշխատում են աչգում (կամ մի
ալլ տեղ):

Բուպոր—

Բանվորի յեվ գյուղացու կապը
հեղափոխության նեցուկն է.

4. պատ. Անապատան չերեխաների հետ զրու-
ցում են պիտներները.

Բուպոր—

Պիտները կազմակերպում է իր
ընթացակառի յերեխաներին ու նը-
րանց հետ մասնակցում ընդհա-
նուր աշխատանքին:

5. պատ. Դասարանի անկյունը. պիտներներն
աշխատում են. մի մեծ պլակատ՝ «ՅՈՐՊՈՍՏ»:

Բուպոր—

Ուսումը հիշիր, պիտներ, յերբեք
այդ չմոռանաս: Պատանի լենի-

նական, դպրոցում որինակելի
յեղիր: Գիտությունն ու հմտու-
թյունը բանվորական պայքարի
գործում մեծ ուժ են:

Պլակատ—

Սովորել, սովորել, սովորել. Սա
յն Իլլիչի պատգամը:

(Նորից բեմը լրիվ լուսավորվում է. կոլլեկտիվ ար-
տասանություն)

Բոլորը—

Դրոշ ենք բռնել անհաղթ բանակի
փայլուն վառ փարոս կոշտա-
ցած ձեռքի

Կրնժանանք մենք, կրնժանանք
առաջ

Ուղիով միշտ պայծառ Լենինի:

Մեր պատգամն է.

Մեկը—

Լինել բեզ պես.

Բոլորը—

Մինչ վերջին րոպեն

Մեկը—

Պայքարել

Բոլորը—

Կոմունիզմի

Մեկը—

Հաղթանակի

Մի ուրիշը—

Համար:

Բոլորը—

4. Միջազգ. մանկ. շարժում

Բուպոր—

Պիտներն ընկեր է բոլոր պիտ-
ներներին, բանվորների, գյու-
ղացիների յերեխաներին:

Պլակատ—

«Պիտներներ բոլոր յերկրների
միացե՛ք».

Առաջին—

Ընկերներ, միայն մեզ մոտ,
խորհրդային յերկրներում, ուր
իշխանությունը բանվորների ու

զյուղացիների ձեռքին ե, յերեսանների խնամքը առաջին տեղն ե բռնում:

Յերկուրդ—

Մյուս յերկրներում, ուր բուրժույներն են իշխում, ծանր ե կյանքը բանվոր յերեսանների. Լսեցե՛ք.

Յերուրդ—

Պլակաս—

Բուպոր—

Զիկագո— Ամերիկա.

Զիկագոյում ամեն որ հսկայական քանակությամբ անասուններ են մորթվում. 5000 յերեսա 8—12 տարեկան հոտած փորոտիքների յեռնացած կոյտերն են դասավորում:

Պլակաս—

Բուպոր—

Յապոնիա, Չինաստան.

Արքեշումի բոժոժներ քանդկը դժվար աշխատանք ե. միայն մանկական քնքույշ մատները կարող են մետաքսը քանդել: Հազարավոր յերեսաններ զբաղված են այդ աշխատանքով. զրժբախտները մետաքսի փոշին կույ տալուց թորախտ են ստանում, մեռնում:

Պլակաս—

Բուպոր—

Գերմանիա.

Գերմանիայի բանվորների յերեսանները բաղցած են, յեթե նրանք փորձում են հարուստի դաշտից վերցնել մի յերկու

կարտոֆիլ—կուշտ վոստիկանները զնդակահարում են նրանց: Իտալիա.

Պլակաս—

Բուպոր—

Իտալիայի փոքրիկ տղաները, վոր լսել են ու սիրում են Լենինին—պատի վրա ածուխով գրեցին— Լենին. ֆաշիստները չարաչար պատժեցին փոքրիկ տղաներին:

Յերեհ հոգի միասին—

Մական բանվորների յերեսանները չեն ընկնվում. նրանք պատրաստվում են կռվելու բանվոր դասակարգի ազատագրման համար: Կենդանի չեն պատգամները Լենինի նրանց վառ սրտերում:

Առաջին—

Յերկուրդ—

Յերուրդ—

Միասին—

Բուպոր—

Մենք կոգնենք մեր ընկերներին: Մենք կանդամագրվենք Մոպրին.

Նրանց ոգտին փող կժողովենք.

Մենք կոգնենք մեր ընկերներին:

Պիոներներ հիշեք բոլոր յերկրների ձեր ընկերներին:

Վերջաբան— Մարշ.

Պլակատ— ԳՆՈՒՄ ԵՆՔ ԱՌԱՋ

Մենք պիոներներ ենք

բանվորի զավակ

զնում ենք առաջ

Լենինի դրոշի տակ:

Աշխույժ ու ժիր,
համարձակ ու հաշտ,
գնում ենր խիզախ շարքերով
Լենինի զծած ուղիով:

Հետեվից Բուպորը—Ամենալավ արձանը Լենինին—միլիոնավոր պատանի լենինականներն են:

(Վարագույր)

ԻԼՅԻՁԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՁԻ ՀԱՅՐԸ

Իլյա Նիկոլայիվիչը ցածրահասակ, սևադեմ, ճաշատ գլխով մարդ էր. նա չերկար սլուրտուկ էր հագնում փայլուն կոճակներով—ժողովրդական դպրոցների



տեսուչի հագուստը: Նա միշտ լավ վերաբերմունք էր ցույց տալիս դեպի աղքատները, մանավանդ դեպի այն աղքատները, վրոնք իր ապրած տանն էլին կենում:

Գյուղացիների կյանքին նա շատ լավ ծանոթ էր և իր լեքեխաներին էլ սովորեցնում էր սիրել գյուղացիներին:

ԻԼՅԻՁԻ ՄԱՅՐԸ

Վլադիմիր Իլյիչի մայրը, կարճահասակ, գունատ, շիկահեր լոխ կին էր: Հիվանդի տես էր նա, մանավանդ Լենինի մեծ լեղբայր՝ Ալեքսանդր Իլյիչի կախազան հանելուց հետո: Սակայն նա տոկուն կին էր և գլտեր իրեն պահել. նա արժանի մայր էր Ալեքսանդրի և Վլադիմիրի պես զավակների համար:

Յերբ վոստրիկանապետը գիմեց նրան թե «կարող եք պարծենալ ձեր զավակներով, մեկին կախեցինք, իսկ մյուսին էլ պարանը սպասում է»—նա հըպարտորեն պատասխանեց՝ «Այո, լիս իմ զավակներով պարծենում եմ»:

ՎԱԼՈՂՅԱ

Վալոդյա Ուլյանովիչը իր արտաքինով ավելի ջահել էր լերևում, քան իրոք էր: Նա ցածրահասակ, նրվազ, սպիտակամորթ, միշտ մազերը կարճ կտրած: Իր հասակակիցների մեջ նա աչքի չէր ընկնում, վորպես չափազանց ընդունակ և աշխատասեր աշակերտ: Դասարանում առաջին աշակերտն էր. գլխնազլան ավարտեց վոսկի շքանշանով: Վալոդյան միշտ ոգնում էր իր ընկերներին լավ սովորել. նա շատ ուրախ, ընկերասեր տղա չէր. Վալոդյան գլտեր և սովորել և լավ խաղալ, չարություն անել, ավելի քան իր ընկերները, սակայն նրա խաղերն ու չարություններն անփնառ էին:

ԼՈՂԱՐԱՆՆ ՈՒ ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ

Վալոդյայի ամենասիրելի զբաղմունքն ամառը ձուկ վորսալն ու լողանալն էր: Մենք միասին լողա-

հում հիշնք Սվիյակա գետում, ջրաղացի հետևը. ձուկ
ևլ վորսում հիշնք հուլն գետում, գինու գործարանի
մօտի կամուրջից կախելով մեր կաթերը ջուրը:

Գինու գործարանի բակում մի կեղտոտ առու
կար. մենք վորոշեցինք փորձել մեր բախտն ու ալդ-
տեղ ել ձուկ վորսալ: Դիչ ֆուսց Վալուդյան մեռներ,
վորովհետև չերը ուզում եր. կաթը գցի ջրի մեջ, վո-
տը սղղաց ու նա ընկավ տիղմոտ առվի մեջ. լավ եր
վրա հասավ մի բանվոր ու նրան ազատեց: Այդ չերե-
կո Իլյա Նիկողայեվիչը մեզ չերկուսիս ել մի լավ հան-
գիմանեց:

ՉԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իլյա Նիկողայեվիչ Ուլյանովի մոտ շատ մարդիկ
հիշն գալիս, բայց իմ հիշողության մեջ չերկուսիս պատ-
կերն ե ֆուսցել. մեկը՝ չուվաշական դպրոցի տեսուչ՝
Յակովլևիլը և մյուսը՝ չերգի ուսուցիչ Մատորինը. Ամ-
բողջ Միմերիսկին հայտնի չեր նա իր տարրինակու-
թյամբ:

Վալուդյան նրանով շատ եր գրադվում: Մի՞գեպք
ևմ հիշում:

Մատորինը Ուլյանովի մոտ գալիս տեսնում ե,
վոր միշտ գրպանից բուլկու ծալրն եր չերեում:

Մենք շատ հիշնք դրա մասին մտածում:

Մի անգամ իմ առաջարկով մենք բուլկին Մա-
տորինի գրպանից հանեցինք ու պահեցինք:

Մատորինը կորուստը նկատեց ու գանգատվեց
Իլյա Նիկողայեվիչին. գործը քննվեց. Վալուդյան ամ-
բողջ մեղքն իր վրա վերցրեց: Հայրը սաստեց նրան:

Մի ուրիշ անգամ մենք Մատորինի ծակ կրկնա-
կողիներն ազրով լցրինք, ելի պատիժը Վալուդյան
կրեց:

ԻՆՉ Ե ԿՏԱԿԵԼ ԻԼՅՈՒՆ ԴԻՈՆԵՐ- ՆԵՐԻՆ

Իլյիչը չաեսավ պիոներական շարժման զար-
գացումը: Նոր-նոր եր այդ շարժումը ծնվում:
Ժամանակներն ել այլ հիշն, այլ ինդիվիդներ հիշն
դրված մեր առաջ, ուրիշ բաների մասին պետք
ե մտածելիք: Մեր շուրջն ամեն ինչ այնպես
եր քայքայված, այնպիսի քաղց ու աղքատու-
թյուն եր տիրում, քաղաքացիական կռիվն այն-
պես եր բոցավառված, այնպիսի ողակի մեջ հիշն
մեզ առել մեր թշնամիները ու սեղմում, վոր
մեր ուշադրությունն այլ կողմ եր ուղղված:

Իլյիչը հուլիսիկ այդ ծանր ժամանակը չեր
մոռանում չերեխաներին, նա այն կարծիքին
եր, վոր մենք ամենավերջին կուպեկներից պետք
ե պոկենք, տանք չերեխաներին, բացենք ման-
կատներ, կազմակերպենք նրանց սնունդը, հոգ
տանենք անապատաժ չերեխաներին: Ամենից
շատ նա ուշադրություն դարձնում եր մատաղ
սերունդի վրա: Հաճախ ժողովներում, կոմսոմոլի
համագումարներին նա խոսում եր չերիտասարդ-
ների, չերեխաների մասին:

Ինչ ե կտակել Լենինը չերիտասարդներին:
Կոմսոմոլի III համագումարին Լենինն ա-

սաց. «Այն սերունդը, վորի ներկայացուցիչներն
այժմ 30 տարեկան են, հույս չի կարող ունե-

նալ, վոր կտեսնի կոմունիստական հասարակա-
կարգը: Մինչ այն այդ սերունդը կմեռնի: Իսկ
այն սերունդը, վորն այժմ 15 տարեկան է կը
տեսնի կոմունիստական հասարակարգը, ինքը
կկառուցի այդ հասարակարգը: Յեւ այս սե-
րունդը պետք է իմանա, վոր իր ամբողջ կյան-
քի նպատակն է կառուցել այդ հասարակարգը»:

Ուրեմն, պիտներներ, նա ձեզ ել է ասել,
վոր դուք պետք է կառուցեք այդ հասարակար-
գը, ձեր ամբողջ կյանքի նպատակը—կոմու-
նիստական հասարակարգի կառուցումը պետք
է լինի:

Ինչ պետք է անի պիտները, վոր այդ պատ-
գամը կիրառի:

Սովորել, ելի սովորել, ելի ու ելի սովորել:
Բայց ինչպես սովորել:

Վոչ միայն գրքերով, այլև կյանքում ոգնե-
լով բանվորների ու զյուզացիների հասարակա-
կան աշխատանքներին:

Հարկավոր է ուսումնասիրել բնության ո-
րենքները, վորպեսզի ոգտագործել այդ ժողո-
վրդական տնտեսության զարգացման համար:

Հարկավոր է ուսումնասիրել հասարակական
կյանքի որենքները, վոր լավ հասարակարգի
համար ճիշտ պայքարել սովորենք:

Սովորել վոչ թե մեն-մենակ, այլ միասին,
ընկերովի:

Միասին աշխատել, կոմունիստական վոգով:
Միշտ հիշել աշխատավորների շահերը, ընդ-
հանուրի գործը:

Պատրաստվել, դառնալ լավ ընկեր, պայքա-
րող, անդուր, ճիշտ աշխատող, գիտցիպլինայի
յենթարկվող: Դառնալ իսկական լենինական:

Ահա թե ինչ է կտակել վոչ միայն պիո-
ներներին, այլ և մեզ բոլորիս Վլադիմիր Իլյին
Լենինը:

Մ Ե Ն Ք

Մենք ենք հիմքը նոր կյանքի, (բոլորը)

Մեր մարմնում առողջ հոգի, (մեկը)

Հոկտեմբերի ծնունդն ենք, (բոլորը)

Կարմիր, մատաղ սերունդն ենք: (մեկը)

(մեկը) Նրա հուզիչ ՅԵՐԳՆ ԵՆՔ ՄԵՆՔ (բոլորը)

(մեկը) Նրա առատ ԲԵՐՔՆ ԵՆՔ ՄԵՆՔ (բոլորը)

(մեկը) Նրա զալիք ՋԵՌՔՆ ԵՆՔ ՄԵՆՔ (բոլորը)

Հին աշխարհը պիտ փշրենք: (բոլորը)

(մեկը) Հնչեց մեծ պատգամը նոր,

Լենինի ծայրը հզոր՝

(բոլորը) «Մուրճ յեւ մանգաղ միացե՛ք,

Իշխանություն կառուցե՛ք»:

(մեկը) Մեր ուսերին է շինվում

Նոր կյանքի շները կանգուն:

(բոլորը) Հիմքը մենք ենք այդ շների,

Շները տունն է ամենքի:



ԿԱՐԼ ԼԻԲԿՆԵԽՏ ՅԵՎ ՌՈԶԱ ԼՅՈՒՔ-ՍԵՄԲՈՒՐԳ

Լենինյան շաբաթը, հունվարի 15-ից մինչև 22-ը, նվիրված է նաև գերմանական բանվորների առաջնորդներ՝ Կարլ Լիբկնեխտին և Ռոզա Լյուքսեմբուրգին։

Յերիտասարդական կոմունիստական Խնուեր-նացիոնալի հիմնադիրը՝ Կարլ Լիբկնեխտն է։

Նա իր յերկարատև հեղափոխական գործունեյության ժամանակ իր շուրջն եր համախմբել գերմանական բանվոր յերիտասարդությանը ու մասնակից դարձրել նրանց հեղափոխական կռվին։

Ռոզա Լյուքսեմբուրգը նրա մոտ ընկերն եր։ Նրանք պայքարում եյին իմպերիալիստական կռվի դեմ։ Գերմանական բուրժուազիան և բանվոր դասակարգի դավաճան սոցիալ-դեմոկրատները կատաղի կռվում եյին նրանց դեմ։

Կարլ Լիբկնեխտը, վորպես գերմանական

բանակի հասարակ զինվորը հեղափոխական գաղափարներն եր տարածում այգ բանակում։

Բանվոր դասակարգը շատ եր սիրում իր համարձակ ղեկավարներին։

Վոչ աքսորը և վոչ՝ բանտը չեյին սարսափեցնում նրանց։ Լիբկնեխտը արգեն դարձել եր գերմանական կոմունիստների ղեկավարը, բայց նրա արդյունավետ հեղափոխական աշխատանքը անժամանակ դադարեց։

Բուրժուազիայի վարձկան սոցիալ-դեմոկրատները 1919 թվի հունվարի 15-ին սպանեցին Կարլ Լիբկնեխտին և Ռոզա Լյուքսեմբուրգին։

Թիկունքին ուղղած ստորաբար հարվածներով, նրանք հեղափոխության մարտիկների կյանքը դադարեցրին։

Պիոներները յերբեք չեն մոռանա այգ ստորությունը։ Նրանք իրենց ուղեղում ամուր են պահում հեղափոխության ղեկավարների հիշատակը։

Բանվոր դասակարգի թշնամիների դեմ պիոներները միշտ պատրաստ են կռվելու։



Масс. Б.-ка. Уат.

ИИИОЯ БИНА СССР

16/25

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Լենինի ուղիով 2. Դավթյան
2. Լենինի հիշատակին թարգ . Ս.Բ. Ս.Նուսամյան
3. Թաղումի կսկիծից 4. Նորենց
4. Լենին քեռին 5. Զարենց
5. Լենինի ուրը Սերիկ
6. Իլյիչի մանկութունը . թարգ . , ,
7. Ի՞նչ է կտակել Լենինը
պիտեներներին թարգ . , ,
8. Մենք Գագիկ Դավթյան
9. Կարլ Լիբկնեխտ և Ռոզա
Լյուքսեմբուրգը 2. Դ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0148717